ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«7» մարտի 2022թ.
No 97

ՈՐՈՇՈՒՄ

ՄԻ ՇԱՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմված սույն որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) նշված հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ արձանագրությունների համաձայն Հավելվածում նշված ֆիզիկական անձինք ունեցել են չկատարված հարկային պարտավորություններ:

Վերոհիշյալ պարտավորությունների մասով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական ակտեր ընդունելու նպատակով հարուցվել են վարչական վարույթներ և ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 59, 88 հոդվածներով, ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից կայացվել են Հավելվածում նշված «Ֆիզիկական անձի կողմից չկատարված հարկային պարտավորությունը գանձելու մասին» որոշումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգումների և օրենսգրքի 343-րդ հոդվածի 5-րդ մասի 2-6-րդ կետերով սահմանված ուսումնասիրությունների արդյունքում օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող երրորդ հարկային տարին լրանալուց հետո (բացառությամբ նույն հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի), իսկ Օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկին և փոխադրամիջոցների գույքահարկին վերաբերող բաժինների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող

առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող տասներորդ հարկային տարին լրանալուց հետո:

Օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ հարկային ստուգումը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկ վճարողների (համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջաններում կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերում՝ իրավահաջորդի (իրավահաջորդների) մոտ նաև իրավանախորդների մասով), բացառությամբ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հաշվառումից հանված անհատ ձեռնարկատիրոջ մոտ սույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Ըստ Օրենսգիրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի հարկային վարչարարության իրականացման ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձը կազմում է արձանագրություն, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկային իրավախախտումները բացահայտվում և արձանագրվում են հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների, ուսումնասիրությունների կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում հարկային պարտավորությունների հաշվառման արդյունքում:

Նկատի ունենալով որ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասը բացառում է անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մոտ ստուգման իրականացումը, Օրենսգրքով սահմանված հարկման ենթակա գործարքներ իրականացրած ֆիզիկական անձանց կողմից հարկային հաշվարկներ չներկայացվելու և հարկերը չվճարելու արդյունքում, Օրենսգրքի 398-րդ հոդվածով սահմանված կարգով կազմվել են արձանագրություններ, որոնց հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությունում հարուցվել են վարչական վարույթներ և կայացվել չկատարված պարտավորությունները գանձելու մասին որոշումներ:

Հավելվածում նշված արձանագրությունները կազմելիս վաղեմության ժամկետ չի կիրառվել՝ նկատի ունենալով, որ ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածում հղում է կատարված միայն Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ստուգումներին և Օրենսգրքի 343-րդ հոդվածի 5-րդ մասի 2-6-րդ կետերով սահմանված ուսումնասիրություններին:

Սակայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա):

Ըստ նույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

ՈՒստի, հիմք ընդունելով այն, որ Օրենսգրքի 398-րդ հոդվածով սահմանված կարգով ֆիզիկական անձանց մասով կազմվող արձանագրություններով հաշվարկվող գումարների և դրանց գանձման գործընթացի վաղեմության ժամկետների հարցը Օրենսգրքով կարգավորված չէ, իսկ այլ հիմքերով խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ հաշվարկելու համար նախատեսված են վաղեմության ժամկետներ, միաժամանակ հաշվի առնելով այն, որ քննարկվող հարաբերությունների նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառումը չի հակասում այդ հարաբերությունների էությանը, հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմված արձանագրություններով ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորությունները հաշվարկելիս և ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի որոշումներով դրանք գանձելիս պետք է հաշվի առնվեր համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմի առկայությունը: Այսինքն, Հավելվածում նշված ֆիզիկական անձանց վերաբերյալ կազմված արձանագրություններով հաշվարկված պարտավորությունները ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի որոշումներով չէին կարող գանձվել, քանի որ պարտավորությունները հաշվարկվել և գանձման էին առաջադրվել խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող երրորդ հարկային տարին լրանալուց հետո և քննարկվող հարաբերությունների նկատմամբ կիրառելի էր Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական նորմը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Վերոնշվածից հետևում է, որ է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրենքի անալոգիայի կիրառման պայմաններում ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից կայացված կից Հավելվածում նշված որոշումները ենթակա են անվավեր ճանաչման:

Մասնավորապես՝

1" ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 26.01.2021 թվականին կայացվել է «Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին» թիվ 102-Ա որոշումը՝ ֆիզիկական անձ Լաուրա Սողոմոնի Դերձյանից (ՀՎՀՀ 32493306) 03.12.2020 թվականի դրությամբ ունեցած 17.283.500 դրամ պարտավորությունը (որից ապառք՝ 6.840.120 դրամ, տույժ՝ 3.603.260 դրամ, տուգանք՝ 6.840.120 դրամ, համաձայն 03.12.2020 թվականի N5541/2020/ԿՈՒՎ4/Ա Արձանագրության) գանձելու մասին: ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 16.04.2021 թվականի N 26/10 որոշմամբ ֆիզիկական անձ Լաուրա Սողոմոնի Դերձյանի դիմում-բողոքը՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 26.01.2021 թվականի թիվ 102-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին, բավարարվել է մասնակի՝ գանձման ենթակա չկատարված հարկային պարտավորությունից նվազեցվել է 3.756.106 դրամ (որից ապառք՝ 1.530.060 դրամ, տույժ՝ 695.986 դրամ, տուգանք՝ 1.530.060 դրամ): ՀՀ վարչական դատարանի 22.06.2021 թվականի որոշմամբ ֆիզիկական անձ Լաուրա Սողոմոնի Դերձյանի հայցն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ 26.01.2021 թվականի թիվ 102-Ա և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 16.04.2021 թվականի թիվ 26/10 որոշումները վերացնելու պահանջի մասին ընդունվել է վարույթ (գործ թիվ ՎԴ/6832/05/21): Համաձայն ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 16.04.2021 թվականի N 26/10 որոշման, ֆիզիկական անձ Լաուրա Սողոմոնի Դերձյանի 13.527.394 դրամ (որից ապառք՝ 5.310.060 դրամ, տույժ՝ 2.907.274 դրամ, տուգանք՝ 5.310.060 դրամ) չկատարված պարտավորությունները հաշվարկվել են 2012 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2016 թվականի հունիս ամիսներն ընդգրկող ժամանակաշրջանի համար: Միաժամանակ ֆիզիկական անձ Լաուրա Սողոմոնի Դերձյանի կողմից 12.03.2022թ-ին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել դիմում, որով խնդրել է իր նկատմամբ կիրառել Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական նորմը և անվավեր ճանաչել «Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին» թիվ 102-Ա որոշումը:

2" ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 22.03.2021 թվականին կայացվել է «Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին» թիվ 448Ա որոշումը՝ ֆիզիկական անձ Միքայել Կտրիչի Սարդարյանից (ՀՎՀՀ 40049475) 26.02.2021 թվականի դրությամբ ունեցած 115.878.179 դրամ պարտավորությունը (որից

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ապառք՝ 45.487.018 դրամ, տույժ՝ 24.904.143 դրամ, տուգանք՝ 45.487.018 դրամ) գանձելու մասին: Համաձայն ՀՀ ՊԵԿ հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության կողմից 26.02.2021 թվականին կազմված N 803/2021/ԿՈՒՎ4/Ա Արձանագրության, ֆիզիկական անձ Միքայել Կտրիչի Սարդարյանի պարտավորությունները հաշվարկվել են 2015 թվականն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար: Միաժամանակ ֆիզիկական անձ Միքայել Կտրիչի Սարդարյանի կողմից 01.04.2022թ-ին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել դիմում, որով խնդրել է իր նկատմամբ կիրառել Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական նորմը և անվավեր ճանաչել «Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին» թիվ 448Ա որոշումը:

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա կետով, 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անվավեր ճանաչել ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից կայացված «Ֆիզիկական անձի կողմից չկատարված հարկային պարտավորությունը գանձելու մասին» Հավելվածում նշված որոշումները:

2. Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության՝ սույն որոշումը հասցեատերերին իրազեկելու նպատակով, հրապարակել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք էջում:

4/7/2022

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Հավելված
ՀՀ ՊԵԿ նախագահի
ապրիլի 7 2022թ-ի թիվ
97որոշման

Հ/Հ	ՀՎՀՀ	Անվանումը	Փաստաթղթի հերթական համարը	Խախտման բովանդակությունը	Հարկ	Տույժ	Տուգանք	Ընդամենը	ԳՈ համար	ԳՈ ամսաթիվ	ԳՈ գումար	Նշագրում
1	40049475	ՄԻՔԱՅԵԼ ԿՏՐԻՉԻ ՍԱՐԴԱՐՅԱՆ	803/2021/ԿՈՒՎԱ/Ա	Անշարժ գույքի օտարման գործարք, չներկայացրած եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ	45.487.018	24.904.143	45.487.018	**115.878.179**	448Ա	22.03.2021	115.878.179	Որոշումը ենթակա է ամբողջությամբ անվավեր ճանաչման
2	32493306	ԼԱՈՒՐԱ ՍՈՂՈՄՈՆԻ ԴԵՐՁՅԱՆ	5541/2020/ԿՈՒՎԱ/Ա	Կատարվել է անշարժ գույքի վարձակալության գործարք, չներկայացրած տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ	6.840.120	3.603.260	6.840.120	**17.283.500**	102-Ա	26.01.2021	17.283.500	Որոշումը ենթակա է ամբողջությամբ անվավեր ճանաչման: